բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի
համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով
նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն
պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով
սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան
կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու
դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման
ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով
նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) Նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, մեքենա-սարքավորումներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

/Նախատեսվում է նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների գնման դեպքում/:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից _____ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության ____ օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _____ օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է _____ (_____ տառերով) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1** Պայմանագրի գնից՝ _____ (_____) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու

ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20 թ. դեկտեմբերի 25-ը:

**** Կիրառվում է, եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար:**

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծած ու փորձաքննություն իրականացրած անձինք պատվիրատուին վճարում են տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման և (կամ) դրա հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

/Նախատեսվում է նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների գնման դեպքում/:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՇԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու պահից, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

*** 7.5 Սույն պայմանագիրը կնքվում ընդհանուր՝ _____ ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

***Սույն կետը կարող է նախատեսվել պայմանագրի նախագծով, եթե կիրառելի է

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

(ստորագրություն)

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՉՀ	Գնման առարկայի անվանում	Տեխնիկական բնութագիր
1	ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ի Հերացու փ. 12 հասցեում գտնվող վարչական եվ լաբորատոր մասնաշենքերի վերակառուցման շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային աշխատանքներ	ըստ հավելվածների 1.1 և 1.2-ի
	այդ թվում.	
	առաջին փուլ	ըստ հավելվածների 1.1 և 1.2-ի
	երկրորդ փուլ	ըստ հավելվածների 1.1 և 1.2-ի

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԵՐԱՑՈՒ Փ. 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ
ԼԱԲՈՐԱՏՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ընդհանուր նկարագրություն

1. Շինարարության նկարագիրը -	2 հինական մ/շ-երի և օժանդակ շինությունների վերակառուցում, տարածքի բարեկարգում
2. Վերակառուցման մակերեսը -	շուրջ 1600 ք/մ
3. Բարեկարգվող, կառուցապատված հողամասի մակերեսը -	շուրջ 1456 ք/մ
4. Անհրաժեշտ սենյակների կազմը-	1. համաձայն կից ներկայացված <u>Հավելված 1.2-ի</u>

Նախագծման ելակետային տվյալներ

- Անշարժ գույքի սեփականության վկայական
- Նախատեսվող սենյակների կազմը համաձայն Հավելված 1.2-ի
- «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ կոմից 15.09.2014 թ.-ին տրված Հերացի 12 հասցեում գտնվող ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ին պատկանող վարչական և լաբորատոր մասնաշենքերի տեխնիկական վիճակի և հետագա շահագործման հնարավորության վերաբերյալ

Նախագծման առաջադրանք

Կառուցման համար նախագծերում ընդգրկել հետևյալ աշխատանքները.

- Իրականացնել քանդման աշխատանքների մանրամասն գծագրեր, վերակառուցվող հարկաբաժինների, տանիքների, ճարտարապետա-շինարարական, կոնստրուկտորական, ուժեղացման արտաքին բարեկարգման աշխատանքների, ինչպես նաև ինժեներական ներքին ցանցերի՝ համակարգերի աշխատանքային գծագրերի մշակում՝ (ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրամատակարարում և օդորակում, թույլ լարման ցանցեր՝ ըստ ցանկի, արտաքին ինժեներական գծերի նորացում կամ փոխարինում ըստ անհրաժեշտության), իրականացնել հիմնական սենքերի եռաչափ մոդելավորում գունային և հարդարման նյութերի առկայությամբ:
 - Տարածքի գեոդեզիա
 - Չափագրման մանրամասն գծագրեր և քանդվող նյութերի մասնագրեր
 - Շենքերի կոնստրուկտորական գծագրեր
 - Ճարտարապետաշինարարական մաս
 - Գլխավոր հատակագիծ
 - Բարեկարգման գծագրեր՝ ամբողջ հողատարածքի մակերեսով

- Ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի փոխարինում
- Ներքին էլեկտրամատակարարման ցանցի փոխարինում
- Նոր ջեռուցման ցանցի իրականացում
- Արտաքին գազատարի կառուցում
- Նոր հակահրդեհային ահազանգման ցանցի իրականացում
- Նոր հեռախոսային և համակարգչային ցանցերի իրականացում
- Նոր տեսահսկման համակարգի իրականացում
- Նոր հեռուստատեսային ցանցի իրականացում 2 սենյակում
- Նոր հրդեհաշիջման համակարգի իրականացում
- Նախատեսել բոլոր աշխատասենյակների և խորհրդակցությունների սենյակների օդորակում
- Ըստ անհրաժեշտության նախատեսել տարածքներում դռների ավտոմատ բացման և քարտային բացման համակարգեր
- Անհրաժեշտության դեպքում արտաքին ինժեներական ցանցերի փոխարինում և/կամ նորոգում
- Նախատեսել բոլոր պատուհանների փոխարինում մ/պ նոր պատուհանների և պատուհանագորգերի փոխարինում պլաստմասե պատուհանագորգերով
- Նախատեսել սանիտարական պարագաներ, ցուցանակներ և շերտավարագույրներ:
- Նախատեսել կախովի առաստաղներ <<Արմսթրոնգ>> տիպի
- Նախատեսել միջանցքներում պրեսգրանիտե հատակներ, սենյակներում լամինատե և ս/հ-ներում ու թաց կետերում խեցեսալե:
- Դռները սենյակներում նախատեսել ՄԴՖ և միջանցքներում ալյումինե կամ մ/պ
- Աստիճանավանդակներում նախատեսել ալյումինե բռնածողեր
- Պատերը հարդարել հիմնականում լատեքսային ներկերով և թաց կետերում հախճաասլիկներով
- Նախատեսել պատերի պաշտպանիչ լամինատե կամ ՄԴՖ բազրիքներ համաձայն կահավորման գծագրերի
- Ուժեղացման աշխատանքները նախատեսել համաձայն Սեյսմիկ եզրակացության և <<-ում գործող շինարարական նորմերի
- Դիտարկել պահակակետի քնդում և նոր տեղում պահակակետի կառուցման հնարավորություն
- Նախատեսել տարածքի բարեկարգում, ցանկապատի նորոգմամբ, դարպասների տեղադրմամբ, ասֆալտապատմամբ, սալվածքի իրականացումով, անհրաժեշտության դեպքում եզրաքարերի փոխարինում և մայթերի իրականացում

Նախագծի կազմը

- գեոդեզիա, բացատրագրեր յուրաքանչյուր մասի համար, մասնագրեր, հատակագծեր, կտրվացքներ, պրոֆիլներ, հանգույցներ, կահավորման մանրամասն գծագրեր ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ, այդ թվում ծավալաթերթի տեսքով նախահաշիվ և աշխատանքների իրականացման ժամանակացույց:

- նախագիծը և նախահաշիվը ներկայացնել՝ անցած քաղաքաշինական անկախ փորձաքննություն
- նախագիծը համաձայնեցնել ՀՀ ԱԻՆ հակահրդեհային պետական տեսչության հետ
- նախագիծը իրականացնել համաձայն ՀՀ-ում գործող քաղաքաշինական նորմատիվ իրավական ակտերին համապատասխան

Այլ պահանջներ

1. Նախագիծը ներկայացնել հինգ օրինակից թղթային և էլեկտրոնային PDF տարբերակներով:
2. Նախահաշիվը ներկայացնել 2 թղթային օրինակից և միաժամանակ ծավալաթերթ էլեկտրոնային, էքսել տարբերակով:
3. Նախագիծը պետք է համապատասխանի ՀՀ շինարարական նորմերին:
4. Նախագծման առաջադրանքին կցվում են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Աշխատանքի կատարման ժամկետը

Առաջին փուլ

Ներկայացնել օբյեկտի գեոդեզիական հանույթը, առաջարկվող գլխավոր հատակագիծը, չափագրման գծագրերը և նախագծի էսքիզային տարբերակը:

սկիզբը

ավարտը

Պայմանագիր կնքելու պահից

Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշվված 45 օրացուցային օրվա ընթացքում

Երկրորդ փուլ

Ներկայացնել վերջնական նախագծանախահաշվային փաթեթը՝ անկախ քաղաքաշինական փորձաքննության եզրակացության հետ միասին:

սկիզբը

ավարտը

Պայմանագիր կնքելու պահից

Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշվված 90 օրացուցային օրվա ընթացքում

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԵՐԱՑՈՒ Փ. 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ
ԼԱԲՈՐԱՏՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հ/Հ	ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՍԵՆՅԱԿՆԵՐՆ՝ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
	Լաբորատոր մասնաշենք		
	Նկուղային հարկ		
0.	Պահեստային սենյակներ	3 սենք	
	1-ին հարկ		
	1-ին հարկի աջ թև		
1.	Ուսուցման լաբորատորիա և կենտրոն	աջ թև	Ամբողջ աջ թևի հատվածում
	1-ին հարկի ձախ թև	ձախ թև	Ամբողջ ձախ թևի հատվածում
2.	Ռեսուրս կենտրոն և մինի – տպարան	աջ թև	Ամբողջ աջ թևի հատվածում
	2-րդ հարկ		
3.	Գլխավոր տնօրեն	3 սենք	1 սենք՝ ընդունարան, 1 սենք՝ 1 հոգի աշխատասենյակ, 1 սենք՝ հանգստի սենյակ՝ սանհանգույցով
4.	Գլխավոր տնօրենի տեղակալներ	4 սենք	1 սենք՝ ընդունարան, 3 սենք՝ 1 հոգի աշխատասենյակներ
5.	Աշխատակազմի ղեկավար	2 սենք	1 սենք՝ ընդունարան, 1 սենք՝ 1 հոգի աշխատասենյակ
6.	Աշխատակազմի ղեկավարի տեղակալ	1 սենք	1 հոգի աշխատասենյակ
7.	Գլխավոր տնօրենի գլխավոր խորհրդական	1 սենք	1 հոգի
8.	Գլխավոր տնօրենի խորհրդական	1 սենք	1 հոգի
9.	Խորհրդակցությունների դահլիճ	1 սենք	25 հոգի
10.	Իմունականխարգելման և կառավարելի վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի. 1 սենք՝ 10 հոգի
11.	Խոհանոց	1 սենք	հոսող ջուր, լվացարան
12.	Սանհանգույցներ	2 սենք	կանանց և տղամարդկանց
	3-րդ հարկ		
13.	Ոչ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 4 հոգի
14.	Ներհիվանդանոցային, աղիքային և արտաընդերային ճանապարհով փոխանցվող վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 7 հոգի

15.	Հատուկ վտանգավոր վարակների և օդակաթիլային վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 6 հոգի
16.	Փոխանցողով պայմանավորված և մակաբուծային հիվանդությունների համաճարակաբանության բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 4 հոգի
17.	Շրջակա միջավայրի հիգիենայի բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 5 հոգի
18.	Աշխատանքի հիգիենայի, ճառագայթային և քիմիական անվտանգության բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 4 հոգի
19.	Ինտեգրացված համաճարակաբանական հսկողության և ռիսկերի կառավարման բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 7 հոգի
20.	Տեղեկատվական տեխնոլոգիաների և ճարտարագիտա-տեխնիկական բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 7 հոգի, 1 սենք՝ սերվերների սենյակ
21.	Հասարակայնության հետ կապերի բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 5 հոգի
22.	Սանհանգույցներ	2 սենք	կանանց և տղամարդկանց
Կցակառույց			
23.	Խորհրդակցությունների դահլիճ	1 սենք	50 տեղանոց
24.	Իմունականխարգելման և ճանապարհորդների սպասարկման կաբինետ	2 սենք	1 սենք՝ գրասենյակային, 4 հոգի, 1 սենք՝ պրոցեդուրային, հոսող ջուր, լվացարան
25.	Հաշվապահական հաշվառման բաժին	3 սենք	2 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 9 հոգի
26.	Տնտեսական ծառայության պատասխանատու և տնտեսվար	2 սենք	1 սենք՝ 1 հոգի
27.	Անձնակազմի կառավարման բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 6 հոգի
28.	Ֆինանսատնտեսագիտական բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 2 հոգի, 1 սենք՝ 6 հոգի
29.	Իրավաբանական բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 5 հոգի
30.	Ծառայությունների մատուցման համակարգման բաժին	2 սենք	1 սենք՝ 1 հոգի, 1 սենք՝ 2 հոգի
31.	Վարորդներ և տեխնիկական անձնակազմ	1 սենք	4 հոգի
32.	Խոհանոց	1 սենք	
33.	Սանհանգույցներ	2 սենք	կանանց և տղամարդկանց
ԸՆԴԱՄԵՆԸ		72	1557 ՔՄ (միջանցքները ներառյալ)

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

(ստորագրություն)

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ.Տ.

Հավելված 3
20 թ.
կնքված N _____ ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<____>> <<____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողը՝
ի դեմս _____, հիմք ընդունելով, որ
պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները
(այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական
բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20__թ-ից _____ 20__ թ. ընկած
ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամա- նակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են
սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն
ստորագրություն

Ազգանուն, Անուն
Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

Ազգանուն,
Կ.Տ.

պարզեցված ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ «---ՊԸԱՇՁԲ---/---»

ք. Երևան

«___» _____ 20 թ.

«Մասնակցի անվանումը» -ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----յանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Պատվիրատուի անվանումը» (այսուհետև՝ «Պատվիրատու») կողմից կազմակերպված՝ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում պահեստների սալիկապատում և երկու ավտոտնակների վերակառուցում պահեստների աշխատանքների ձեռքբերման «---ՊԸԱՇՁԲ---/---» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ), պետք է ներկայացնի հայտի ապահովում և ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 «Պատվիրատու» -ի կողմից կազմակերպված «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում պահեստների սալիկապատում և երկու ավտոտնակների վերակառուցում պահեստների աշխատանքների ձեռքբերման «---ՊԸԱՇՁԲ---/---» ծածկագրով ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ _____ (_____տարեկան) ՀՀ դրամի չափով:

1.1.2 «Պատվիրատու» -ն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում «Պատվիրատու» -ին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը» բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը» -ն հանձնարարում է «Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը» բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Պատվիրատուի նախնունը» առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց «Պատվիրատուի անվանումը» -ի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

«Մասնակցի անվանումը» ,

«Մասնակցի հասցեն»

«Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը»

h/h -----

տնօրեն -----

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ -----

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 8

«---ՊԸԱՇՁԲ---/---» ծածկագրով

պարզեցված ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ՊԸԱՇՁԲ---/---»

ք. Երևան

«_____» _____ 20 թ.

«Մասնակցի անվանումը», ի դեմս Ընկերության տնօրեն՝ «Ընկերության տնօրենի անուն ազգանունը», որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Պատվիրատուի անվանումը» (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «Գնման առարկայի անվանումը» ձեռքբերման «---ՊԸԱՇՁԲ---/---» ծածկագրով պարզեցված ընթացակարգին՝ պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում: Սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագիրը Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված «Գնման առարկայի անվանումը» ձեռքբերման N ՊԸԱՇՁԲ---/--- գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու, կատարումից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ _____թվերով_____ (_____տառերով_____ ...) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Մասնակցի բանկի անվանումը» կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը», հանձնարարում է «Մասնակցի բանկի անվանումը»-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Պատվիրատուի անվանումը» առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ. _____-ի _____-ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

«Մասնակցի անվանումը»

«Մասնակցի հասցեն»

«Մասնակցի բանկի անվանումը»

Հ/Հ

ՀՎՀՀ

տնօրեն՝ _____
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ _____
(ստորագրություն)

Կ.Տ

ԵՐԱՇԽԻՔ N _____

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) _____
հանդիսանում է (անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար) և _____ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
(անունը, ազգանունը կամ անվանումը)

_____ կնքված N _____ պայմանագրից բխող պրինցիպալի
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով _____ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ)
(երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն
կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում
ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել
_____ (_____) _____ (այսուհետ՝
(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ)

երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո _____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

_____ բանկում բացված _____
(բանկի անվանումը) (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող
է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է _____ մինչև _____ ներառյալ:
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից
ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) _____
- 2) _____
- 3) _____:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված
պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը _____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն
երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող
պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում

երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ _____ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ _____

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)